

մասով շրջանի գեղերու ուսուցիչ, ճագուկները աչազուրկ դաստիարակին, անոր «քնթէն» ինկած, իբր միտք ու կազապար: Որոնք զինքը նեղը դրին իրենց միակտուր, կրանիտեայ իմաստութեամբը, տարօրէն պատեհապաշտ, ամուր, անմիջական շահին, անձին օգուտին մայր մտահոգութեամբը թրթռուն: Յեղափոխութեան մասին անոնք ունէին դրական, օգտաւէտ ըմբռնումներ: Սրտոտ, բայց ուշադիր տղաք, որոնց հայրենասիրութիւնը Մաթիկի բերնին մէջ զանգակատան հայրենասիրութեան մը կը նմանէր: Անոնք կ'ուզէին ամէն ինչ կեդրոնացնել իրենց գաւառին մէջ: Այս պահանջկոտութիւնը այդ օրերու մտայնութեան մէկ փաստն էր սակայն: Ու Մաթիկ անիրաւ էր զայն մասնաւորելու Վասպուրական աշխարհին: Աղէտին հոտը այդպէս պահանջկոտ կ'ընէր գեղերը, որոնք կուսակցութեան բոլոր պահեստը, զէնքէ եւ ումբէ, իրենց քարայրներուն մէջ, իրենց պէտքին համար միայն, գրաւել կ'ուզէին:

Մեր վէպը չ'արտօներ լայննալ այդ մտայնութեանց դէպի լրիւ սեւեռումը, որոնք, պատահական, պարագայական իրենց նկարագրին հետ, կը կրէին նաեւ հիմնական թերութիւնը ծաւալ չգտնելու այդ խորապէս պահպանողական, իր աւանդութեանց ցանցին մէջ ամրակող պարզօց, որոնք, դարերով, յամառեցան մնալ խարսխուած մեր հայրենիքի գրեթէ կեդրոնին: Այրարատեան նահանգին հետ Վասպուրականը այն գաւառն է, ուր մեր ժողովուրդը կրցաւ պահել ամէնէն քիչ աղաւաղ կերպարանք մը...

Քանի մը տարի յետոյ, այդ մարզերէն համբաւելի լայն զարտուողներ - նոր սերնդականներ, ազատ-սէրեաններ- այդ շատ կարծրացած պահպանողականութեան դէմ հակազդեցութեան փորձ մը կրնան նկատուիլ: Մնաց որ, նոյն այդ տղաքը, քանի մը տարի առաջ, Մաթիկին դէմ, օտարամուտ անոր անձին հանդէպ բնագրական մախանքով մը (ընկեր Մաթիկը, բացի անսահման եռան-